ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 19 Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ 12-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 12-Լ հրամանով (այսուհետ՝ հրաման) հաստատված հավելվածի՝

1) 3.1-րդ ենթախումբը լրացնել նոր 38-րդ և 39-րդ կետերով.

«38. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության իրավաբանական բաժանմունքի գլխավոր մասնագետ-իրավախորհրդատու (ծածկագիր՝ 03-Հ-3.1-38):»

«39. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության իրավաբանական բաժանմունքի գլխավոր մասնագետ-իրավախորհրդատու (ծածկագիր՝ 03-Հ-3.1-39):»

2) 3.2 ենթախումբը լրացնել նոր 560-րդ, 561-րդ կետերով.

«560. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության իրավաբանական բաժանմունքի առաջատար մասնագետ-իրավախորհրդատու (ծածկագիր՝ 03-Հ-3.2-560):»

«561. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության իրավաբանական բաժանմունքի առաջատար մասնագետ-իրավախորհրդատու (ծածկագիր՝ 03-Հ-3.2-561):»

3) 4.1 ենթախումբը լրացնել նոր 707-րդ կետով.

«707. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության իրավաբանական բաժանմունքի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 03-Հ-4.1-707):»

2. Ուժը կորցրած ճանաչել հրամանով հաստատված հավելվածի 2.2 ենթախմբի 7-րդ կետը, 3.1 ենթախմբի 12-րդ կետը, 3.2 ենթախմբի 346-րդ, 362-րդ և 363-րդ կետերը, 4.1 ենթախմբի 470-րդ կետը:

3. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին և քաղաքացիական հատուկ ծառայության ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ *Ա. ՍԱՐԳՍՅԱՆ*

«08» 04 2020թ.

ք. Երևան